



47. ԱՂՎԵՍԸ ԵՎ ՋԱՂԱՑՊԱՆԸ

Մի ջաղացպան ամեն վախտ տենում էր, որ իրա ջաղացի ալիքը խառնած ա: Շատ միտք արեց, համա շիմացավ, թե ալիքը ով ա խառնում: Մի օր նա ղարաուլ քաշեց ու տեհավ, որ մի Աղվես էկավ ու ալիքը պոշով խառնեց: Ջաղացպանը էն սհաթը վրա հասավ ու բռնեց Աղվեսին: Աղվեսը շատ աղաչեց, պաղատեց, որ իրան վնաս չտա ու խոստացավ, որ ֆլան թաքավորի աղջիկը իրան կնիկ կբերի:

Ջաղացպանն էլ ասեց.— Լա՛վ, թե որ դու կարենաս էղսլես մի լավութլուն անի...

Մեկել օրը առավոտը քշերով-քշերհանա Աղվեսը ջաղացպանի հետ ճամփա ընկավ:

Աղվեսը ներս մտավ թաքավորի պալատը ու ասեց.— Թաքավորն ապրած կենա, Չաղաղ թաքավորի տղեն էկել ա, քու աղջիկը պտի նրան տաս:

Թաքավորը խոսք տվեց, որ աղջիկը նրան կտա: Էն սհաթը ջաղացպանի ալրոտ ու քնձրոտ շորերը հանել տվեց, թագա մի ձեռք շոր կարեց նրա համար ու ոտից մինչև գլուխ զարդարեց: Մեծ ղոշուն տվեց նրան ու իրա աղջիկն էլ նրա վրա պսակելով ճամփու գցեց:

Ճամփու կեսին Աղվեսը նրան ասեց.— Ծա առաջ-առաջ էթամ ու ձեզ համար կերակուր պատրաստեմ: Հենց որտեղ տենաք վառած կրակ, էնտեղ էկեք:

էս մեր Աղվեսը առաջ գնալով՝ ճամփին մի վիշապ պատահեց, որը մի քանի երկիր առել էր իրա ձեռի տակը:

Աղվեսը ասեց վիշապին, թե.— Ճար ունես՝ տե՛ս, էրկու-իրեք թաքավոր իրար հետ էկել են քեզ վրա կռիվ, որ քու երկիրը խլեն ձեռիցդ:

— Աղվես աղբեր, բա՛ որդի տափ կենամ, որ պրծնեմ:

Աղվեսը ասեց.— Հրե՛ս, էս խոտի դեզի մեջ:

Վիշապն էլ էդպես արեց, տափ կացավ խոտի դեզի մեջ:

Սատանա Աղվեսը խոտի շորս դհիցն էլ կրակ տվեց ու վիշապին մեջը էրեց, ու նրա սաղ երկիրը իրան մնաց: Էս կրակը որ տեհան թաքավորի մարդիկը դպա էս կրակը վազեցին ու վեր էկան էս վիշապի քաղաքի մեջ: Էրկու-իրեք օրից հետո թաքավորի ղոշունը ետ դառավ: Մնացին Աղվեսն ու շաղացպանը:

Մի օր Աղվեսն ասեց շաղացպանին.— Որ մեռնեմ, ինձ ո՞նց կթաղես, որ քեզ էս թավուր լավություն արի:

— Խաչով-խաչիառով, ժամով-պատարագով քեզ թաղի կտամ,— ասեց շաղացպանը:

Մի օր Աղվեսը դաստամեռ տվեց:

Ջաղացպանը նոքարին ասեց.— Էս Աղվեսի պոչից բռնի, քուչն գցի:

Նոքարն էլ բռնեց նրա պոչից ու շարտեց քուչն:

Աղվեսը վեր կացավ ու էկավ շաղացպանի մոտ.— Ա՛յ դու ալրոտ շաղացպան, ես քեզ թաքավորի որդի շինեցի ու քեզ համար էսպես կնիկ ճարեցի, դու իմ ղաղըր էսպե՛ս ես իմանում:

Ջաղացպանը աղաչանք արեց, որ ների ու խոստացավ, որ մեռնելուց հետո նրան մեծ պատվով կթաղի:

